



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
(+374 10) 55-25-37, orient@ysu.am, www.yasu.am

Արձանագրություն № 4

Արևելագիտության ֆակուլտետի գիտխորհրդի 2017թ դեկտեմբերի 5-ի նիստի
Նիստին ներկա էին գիտխորհրդի 25 (քսանհինգ) անդամներից 22-ը:

Օրակարգում՝

1. Արևելագիտության ֆակուլտետի դեկանի ընտրության հարցը,
2. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման» շրջանակներում իրականացվող «Հայկական Հարցն ու Հայոց Ցեղասպանության խնդիրը թուրք բարձրաստիճան քաղաքական և ռազմական գործիչների հուշերում (XIX դարի վերջ-XX դարի կեսեր)» ծրագրի ամփոփիչ հաշվետվությունը հաստատելու հարցը,
3. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման» շրջանակներում իրականացվող «Տրապիզոնի նահանգի իսլամացած հայության ներկա վիճակը (Ժողովրդագրությունը և ազգային ինքնության դրսևորումները)» ծրագրի ամփոփիչ հաշվետվությունը հաստատելու հարցը,
4. Իրանագիտության ամբիոնի բ.գ.թ., դոցենտներ Վարդան Ոսկանյանի և Հասմիկ Կիրակոսյանի հեղինակած «Պարսկերեն հասարակական-քաղաքական և դիվանագիտական տեքստերի թարգմանության հիմունքներ» գիրքը որպես բուհական դասագիրք հրատարակության երաշխավորելու և ՀՀ ԿԳՆ-ին որպես բուհական դասագիրք հաստատելու համար դիմելու հարցը:

Լ Ս Ե Յ Ի Ն - Իրանագիտության ամբիոնի բ.գ.թ., դոցենտներ Վարդան Ոսկանյանի և Հասմիկ Կիրակոսյանի հեղինակած «Պարսկերեն հասարակական-քաղաքական և դիվանագիտական տեքստերի թարգմանության հիմունքներ» գիրքը որպես բուհական դասագիրք հրատարակության երաշխավորելու և ՀՀ ԿԳՆ-ին որպես բուհական դասագիրք հաստատելու համար դիմելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռ. Մելքոնյանը, թուրքագիտության թուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, արաբագիտության ամբիոնի վարիչ Հ. Քոչարյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել բ.գ.թ., դոցենտներ Վարդան Ոսկանյանի և Հասմիկ Կիրակոսյանի հեղինակած «Պարսկերեն հասարակական-քաղաքական և դիվանագիտական տեքստերի թարգմանության հիմունքներ» գրքի տպագրությունը որպես դասագիրք: Խմբագիր նշանակել բ.գ.թ. Նունիկ

Դարբինյանին և միջնորդել ԵՊՀ գիտխորհրդին այն ներկայացնելու ՀՀ ԿԳՆ-ին որպես բուհական դասագիրք հաստատելու համար:

Լ Ս Ե Ց Ի Ն - «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման» շրջանակներում իրականացվող «Տրապիզոնի նահանգի իսլամացած հայության ներկա վիճակը (ժողովրդագրությունը և ազգային ինքնության դրսևորումները)» ծրագրի ամփոփիչ հաշվետվությունը հաստատելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, արաբագիտության ամբիոնի վարիչ Հ. Քոչարյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման» շրջանակներում իրականացվող «Տրապիզոնի նահանգի իսլամացած հայության ներկա վիճակը (ժողովրդագրությունը և ազգային ինքնության դրսևորումները)» ծրագրի ամփոփիչ հաշվետվությունը:

Լ Ս Ե Ց Ի Ն - «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման» շրջանակներում իրականացվող «Հայկական Հարցն ու Հայոց Ցեղասպանության խնդիրը թուրք բարձրաստիճան քաղաքական և ռազմական գործիչների հուշերում (XIX դարի վերջ-XX դարի կեսեր)» ծրագրի ամփոփիչ հաշվետվությունը հաստատելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, արաբագիտության ամբիոնի վարիչ Հ. Քոչարյանը, իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման» շրջանակներում իրականացվող «Հայկական Հարցն ու Հայոց Ցեղասպանության խնդիրը թուրք բարձրաստիճան քաղաքական և ռազմական գործիչների հուշերում (XIX դարի վերջ-XX դարի կեսեր)» ծրագրի ամփոփիչ հաշվետվությունը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ռ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ՔՈՉԱՐՅԱՆ

Իսկականի հետ ձիշտ է՝

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Հ. ՔՈՉԱՐՅԱՆ

**Արևելագիտության ֆակուլտետի դեկանի ընտրության արևելագիտության ֆակուլտետի
գիտխորհրդի 2017թ դեկտեմբերի 5-ի նիստի
արձանագրություն 4**

Նիստին խորհրդակցական իրավունքի ձայնով մասնակցում էր ԵՊՀ ռեկտոր Ա. Միմոնյանը:

Արևելագիտության ֆակուլտետի գիտխորհրդի 25 անդամներից ներկա էին 22-ը:

Նախագահող ընտրվեց արաբագիտության ամբիոնի պրոֆեսոր Դ. Հովհաննիսյանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - Արևելագիտության ֆակուլտետի դեկանի ընտրության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Նախագահողը նիստը սկսեց և թեկնածուի առաջադրման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման և թեկնածուների ցուցակը ներկայացնելու համար խոսքը փոխանցեց գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանին: Հ. Քոչարյանը ներկայացրեց միակ թեկնածու Ռուբեն Մելքոնյանի անձնական գործը և կենսագրական տվյալները, ինչպես նաև արաբագիտության, թյուրքագիտության և իրանագիտության ամբիոնների դրական կարծիքները և երաշխավորումները Ռ. Մելքոնյանի թեկնածության վերաբերյալ: Նախագահողի առաջարկությամբ գիտխորհուրդը որոշեց թեկնածուի ելույթի տևողությունը (20 րոպե), որից հետո ծրագրային ելույթի համար նախագահողը խոսքը փոխանցեց դեկանի պաշտոնի թեկնածու Ռ. Մելքոնյանին: Վերջինս ներկայացրեց ֆակուլտետի զարգացման իր ծրագիրը:

Ծրագրային ելույթից հետո սկսվեց դեկանի պաշտոնի թեկնածուի քննարկումը, որի համար նախագահողի առաջարկով գիտխորհուրդը ելույթների համար սահմանեց 5 րոպե ժամանակ տևողություն:

Ելույթ ունեցան.

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրենի պաշտոնակատար Վ. Տեր-Ղևոնդյանը՝ մատնանշելով թեկնածու Ռ. Մելքոնյանի մասնագիտական և վերլուծական բարձր գիտելիքները, ինչպես նաև հանրային անձ լինելու փաստը, հույս հայտնեց, որ ֆակուլտետը Ռ. Մելքոնյանի ղեկավարությամբ կմտնի որակական նոր փուլ:

ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը խոսեց թեկնածուի բարձ պրոֆեսիոնալիզմի մասին:

ԵՊՀ իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը մատնանշեց, որ արևելագիտության ֆակուլտետը մտնում է նոր փուլ, ուր գերակայելու են վստահությունն ու փոխադարձ հարգանքը, ինչպես նաև ընդգծեց Ռ. Մելքոնյանի կոլեգիալ որոշումներ կայացնելու ունակությունը:

ԵՊՀ արաբագիտության ամբիոնի պրոֆեսոր Դ. Հովհաննիսյանը խոսեց Ռ. Մելքոնյանի աշխատասիրության, նախաձեռնողականության և թիմ ստեղծելու որակների մասին:

ԵՊՀ ռեկտոր Ա. Միմոնյանը նշեց, որ դեկանի պաշտոնի թեկնածու Ռ. Մելքոնյանը կիրթ ու աշխատասեր անձնավորություն է, որը վայելում է ռեկտորատի վստահությունն ու հարգանքը և կոչ արեց գիտխորհրդի անդամներին կողմ քվեարկել նրա թեկնածությանը:

Ելույթների ավարտին դեկանի պաշտոնի թեկնածու Ռ. Մելքոնյանը իր շնորհակալությունը հայտնեց ելույթ ունեցողներին:

ԵՊՀ ֆակուլտետի դեկանի ընտրության կարգի համաձայն, քանի որ միակ թեկնածուն ինքնաբացարկ չհայտնեց, նրա անունը գիտխորհրդի որոշմամբ գրանցվեց քվեաթերթիկում:

Նախագահողը խոսքը փոխանցեց գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանին, որը ֆակուլտետի գիտխորհրդի անդամներին ներկայացրեց փակ, գաղտնի քվեարկության կարգը:

Նիստը նախագահողի առաջարկով՝ փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար, ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով: Առաջարկվեցին Քոչարյան Հայկի, Գևորգյան Գառնիկի, Միրզոյան Քնարիկի, թեկնածուությունները: Հաշվիչ հանձնաժողովի վերոհիշյալ կազմը հաստատվեց միաձայն: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ ընտրվեց Ք. Միրզոյանը:

Անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն:

Լսեցին հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ք. Միրզոյանի հաղորդումը փակ գաղտնի քվեարկության արդյունքների մասին:

Գիտխորհրդի 25 անդամներից, ներկա էին 22-ը և քվեարկությանը մասնակցել են 22-ը: Բաժանվել է 22 քվեաթերթիկ: Քվեատուփում հայտնաբերվել է 22 քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են.

կողմ - 21

դեմ - 0

անվավեր քվեաթերթիկ - 1

Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով արևելագիտության ֆակուլտետի դեկանի թեկնածու Ռուբեն Հովհաննեսի Մելքոնյանը ընտրվել է արևելագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ (միաձայն), համաձայն որի Ռուբեն Հովհաննեսի Մելքոնյանը ընտրվել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան:

ՆԻՍՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Դ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ՔՈՉԱՐՅԱՆ

Իսկականի հետ ձիշտ է՝

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Հ. ՔՈՉԱՐՅԱՆ